ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«-----» սեպտեմբերի 2013թ. N –Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆԻ Փ. ԲՈՒԶԱՆԴԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 1/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻՑ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 25-ի N580-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Փ. Բուզանդի փողոցի թիվ 1/3 հասցեում գտնվող վարչական շենքի 1-ին հարկի 17.1քմ և 2-րդ հարկի 232.9քմ մակերեսներով տարածքներն անհատույց օգտագործման իրավունքով 5 /հինգ/ տարի ժամկետով տրամադրել <<ՎԷՄ>> բարեգործական հասարակական կազմակերպությանը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԵՐԵՎԱՆԻ Փ. ԲՈՒԶԱՆԴԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 1/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻՑ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի մայիսի 9-ի N604-Ն որոշմամբ Երևանի Փ. Բուզանդի փողոցի թիվ 1/3 հասցեում գտնվող վարչական շենքը անհատույց սեփականության իրավունքով փոխանցվել է Երևան համայնքին, կատարվել է համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցում (անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման 03.11.2011թ. հ.2817291 վկայական)։

Փ. Բուզանդի փողոցի թիվ 1/3 հասցեում գտնվող վարչական շենքում «ՎԷՄ» բարեգործական հասարակական կազմակերպությունը ավելի քան 11 տարի ստեղծել է արդի բարձր պահանջներին համապատասխան ստուդիաներ։

Կազմակերպության գործունեությունը ուղղված է բացառապես մշակութային և հոգևոր արժեքների պահպանման և հանրությանը փոխանցելու նպատակին։

«ՎԷՄ» բարեգործական հասարակական կազմակերպությունը նշված 11 տարիների ընթացքում պատրաստել և հեռարձակել է բազմաթիվ հեղինակային հաղորդումներ, որոնք իրենց մատուցման որակով և քննարկումների խորությամբ դարձել են չափանիշ հայկական եթերի համար, իսկ ռադիոկայանի թողարկած հայ դասական և հոգևոր երաժշտության բարձրակարգ ձայնագրությունները բարձր մակարդակով ներկայացնում են հայ մշակույթը Հայաստանում և արտերկրում։

Շահույթ չհետապնդող այս ռադիոկայանի հաղորդումները և ձայնագրությունները անհատույց հեռարձակվում են Հայաստանի Հանրապետության և Արցախի տարածքներում գործող ռադիոկայաններով, ինչպես նաև՝ համացանցով (www.vem.am)։

Ելնելով վերոգրյալից, հաշվի առնելով կազմակերպության գործունեության համար նպաստավոր պայմաններ ստեղծելու անհրաժեշտությունը, ղեկավարվելով Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի դեկտեմբերի 25-ի N580-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետով՝ նպատակահարմար է գտնվել բավարարելու «ՎԷՄ» բարեգործական հասարակական կազմակերպության խնդրանքը և զբաղեցրած տարածքի նկատմամբ 5 տարի ժամկետով ձևակերպելու անհատույց օգտագործման իրավունքը։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆԻ Փ. ԲՈՒԶԱՆԴԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 1/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻՑ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Երևանի Փ.Բուզանդի փողոցի թիվ 1/3 հասցեում գտնվող վարչական շենքից անհատույց օգտագործման իրավունքով տարածք տրամադրելու մասին» Երևանի քաղաքի ավագանու որոշման ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆԻ Փ. ԲՈՒԶԱՆԴԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 1/3 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻՑ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Երևանի Փ.Բուզանդի փողոցի թիվ 1/3 հասցեում գտնվող վարչական շենքից անհատույց օգտագործման իրավունքով տարածք տրամադրելու մասին» Երևանի քաղաքի ավագանու որոշման ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ